

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

22.12. 2023թ.

Տեղի է ունեցել <<Արզինայի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի մանկավարժական խորհրդի նիստ: Նիստին մասնակցում էին մանկավարժական խորհրդի բոլոր անդամները:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

1. 2023-2024 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի աշակերտների բացակայություն և առաջադիմություն, էլեկտրոնային մատյանների գրանցումների ստուգում:
2. 1-ին կիսամյակի տարեկան պլանների կատարողական
3. Օլիմպիադաների քննարկում /մաթեմատիկա, ռ. լեզու, հայոց լեզու, անգլերեն, աշխարհագրություն, հայոց պատմություն/ առարկաների դպրոցական և մարզային փուլեր
4. Դասալսումների քննարկում
5. Միջոցառումների քննարկում/ Վ. Դալլաքյան, Լ. Եղիազարյան, Ա. Մարկոսյան, Ա. Դավթյան և Ա. Ղարիբյան/
6. Գրավոր աշխատանքների քննարկում
7. 12-րդ դասարանում ուսպլանում 31 ժամի ապահովում
8. Ծնողական ժողովներ, մեթոդախոսակցություններ, հեռավար դասեր, համատեղումների քննարկում
9. 2023-2024 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում դպրոցի ուսումնական պլանի քննարկում և դասաբաշխման հաստատում (զեկուցող՝ տնօրեն Ն. Մարկոսյան
10. Նոր չափորոշչային գնահատման քննարկում

ՈՐՈՇԵՑԻՆ

1-ին կետի շուրջանակներում խոսեց տնօրենի տեղակալ՝ Արուսյակ Ասլանյանը: Նա ներկայացրեց 2023 թվականի 1-ին կիսամյակի աշակերտների բացակայության և առաջադիմության մասին և նշեց, որ էլեկտրոնային մատյաններում գրանցումների և գնահատականների թերությունները շտկվել են.

2-րդ կետի շուրջ խոսեց տնօրենի տեղակալ Ա. Ասլանյանը, նա նշեց որ բոլոր ուսուցիչները և դասղեկները ներկայացրել են իրենց տարեկան պլանների կատարողականները /բացառությամբ հեռավար ուսուցիչների /

3-րդ հարցի շուրջ խոսեց տնօրեն՝ Ն. Մարկոսյանը, նա ներկայացրեց 2023 թվականի 1-ին կիսամյակում տեղի ունեցած դպրոցական և մարզային օլիմպիադաների արդյունքները

4-րդ կետի շուրջ խոսեցին տնօրեն Ն. Մարկոսյանը և տնօրենի տեղակալ Ա. Ասլանյանը : Նրանք ներկայացրեցին, որ կատարվել է դասալսումներ թերությունները և առաջարկումները քննարկվել են դասալսումից հետո և 2-րդ կիսամյակում հատուկ ուշադրություն է դարձվելու նոր չափորոշիչների կիրառմանը և թերությունների շտկմանը .

5-րդ կետի շուրջ խոսեց տնօրեն Ն. Մարկոսյանը, նա նշեց, որ Արզինայի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ում 2023 թվականի 1-ին կիսամյակում աշակերտների և ծնողների համագործակցությամբ տեղի են ունեցել բազմաթիվ արտադպրոցական միջոցառումներ

/<<սեպտեմբերի 21>> , <<Ա տառի բացում>>, <<Մեր շնորհալիները>>, <<նախագծային աշխատանքներ>> <<ասմունք>> և <<ամանորյա միջոցառումներ>>

6-րդ հարցի շուրջ խոսեց տնօրեն Ն. Մարկոսյանը , նա ներկայացրեց , որ տրվել են տնօրենի կողմից գրավոր աշխատանքներ, նշվե է նաև բարձր առաջադիմություն ունցող աշակերտների գրավոր աշխատանքները:

7-րդ հարցի շուրջ խոսեց տնօրեն Ն. Մարկոսյանը , նա ներկայացրեց , որ 12-րդ դասարանը 2-րդ կիսամյակում իրենց դիմումների համաձայն կուսումնասիրեն այն առարկաները որոնք ընտրել և ուսալանը հաստատվել է 31 ժամով:

8-րդ հարցի շուրջ խոսեց տնօրենի տեղակալ՝ Արուսյակ Ասլանյանը , նա նշեց որ, բոլոր դասղեկները 1-ին կիսամյակում կազմակերպել են 3 ական ծնողական ժողովներ և արձանագրվել են :

9-րդ հարցի շուրջ խոսեց Նարինե Մարկոսյանը , նա ներկայացրեց 2023-2024 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ուսումնական պլանը, դպրոցական և պարտադիր բաղադրիչից հատկացված դասաժամերի վերաբաշխումը

10-րդ հարցի շուրջ խոսեց տնօրեն՝ Նարինե Մարկոսյանը, նա ներկայացրեց , որ 2023-2024 ուսումնական տարում պետք է կիրառվեն 2-րդ , 5-րդ և 7-րդ դասարաններում նոր չափորոշչային գնահատում / ձևավորող, ամփոփիչ, հայտորոշիչ/

Նախագահ՝

Քարտուղար՝



Ն. Մարկոսյան

Լ. Եղիազարյան